Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անուն Ազգանուն
Անահիտ Ավանեսյան

2. Զբաղեցրած պաշտոնը
ՀՀ առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները
Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2023 թ. դեկտեմբերի 20-22

4. Հրավիրող կողմը
ՌԴ առողջապահության նախարարություն

5. Գործուղման նպատակը
Մասնակցություն Ռուս-հայկական 8-րդ առողջապահական ֆորումին

6. Քննարկված թեմաները

Այս տարի ֆորումը նվիրված էր վնասվածքաբանության, օրթոպեդիայի և վերականգնողական բուժման արդիական հարցերին: Միջոցառման ընթացքում քննարկվել են հիշյալ ոլորտներում գիտական, բուժական և կազմակերպչական հարցեր:

ՌԴ առողջապահության նախարար Մ. Մուրաշկոյի հետ առանձնազրույցում նշվեց առողջապահության բնագավառում ՀՀ և ՌԴ միջև համագործակցության շարունակական և հաջող ընթացքը, կարևորվեց այն ընդլայնելու և խորացնելու կողմերի ձգտումը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Ֆորումին հանդես եմ եկել ողջույնի խոսքով՝ նշելով, որ առողջապահության ոլորտում համատեղ համաժողովների անցկացումը դարձել է լավ ավանդույթ և նպաստում է համագործակցության ամրապնդմանը՝ ոչ միայն մասնագիտական, փորձի փոխանակման մակարդակով, այլ նաև հիմք է երկկողմ ամուր կապերի և հարաբերությունների հետագա խորացման համար:

Հայկական պատվիրակության անդամները հանդես եկան զեկույցներով՝ ներկայացնելով Հայաստանում վնասվածքաբանության, օրթոպեդիայի և վերականգնողական բուժման ոլորտները:

Ֆորումի շրջանակներում կազմակերպվել էր նաև այց բժշկական իմպլանտներ արտադրող «Կոնմետ» ընկերություն, որտեղ հնարավորություն ընձեռվեց տեղում ծանոթանալու ռուսական արտադրանքին և արտադրության նորարարական մոտեցումներին:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի շրջանակներում համագործակցության համաձայնագիր է ստորագրվել ՀՀ առողջապահության նախարարության «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի և ՌԴ առողջապահության նախարարության «Ն.Ն. Պրիորովի անվան վնասվածքաբանության և օրթոպեդիայի ազգային բժշկական գիտահետազոտական կենտրոնի» միջև: Սա նոր քայլ է երկկողմ հարաբերությունների խորացման ուղղությամբ և ուղղված է մեր երկրում տեխնոլոգիական նոր ձեռքբերումների ներդրմանը:

9. Առաջարկությունները

Առաջարկվեց հայ-ռուսական առողջապահական հաջորդ՝ 9-րդ ֆորումը կազմակերպել 2024 թ. Երևանում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

2023 թ. դեկտեմբերի 25

26.12.2023

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը — ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — N 1281-Ա 19.12.2023թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) — Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյան
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը — Ռուսաստանի Դաշնություն ք. Մոսկվա
5. Գործուղման ժամկետները — 2023թ.դեկտեմբերի 20-22-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը — Ճանապարհածախս, գիշերավարձ և օրապահիկ
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անահիտ Ավանեսյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	Էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	134,191.0	134.19
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 134.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	54,314.2	
	Օրերի քանակը	2	
	Ընդամենը (դրամ)	108,628.4	108.63
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 86.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	34,858.4	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	104,575.1	104.58
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (նկարագրել)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**347.39**	**347.39**

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը — 25.12.2023թ.